ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 6
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/4» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

12.05.2022թ.
Ժամը 14[45]

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ԹԱ վարչության պետ՝ Հ. Մելիքյան (ԳԱՊ),
ՀՀ ԶՈՒ ԲՀԱ վարչության ՄՇԺԱ բաժնի պետ՝ Խ. Խաչատրյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ԹԱՎ ապահովման 2-րդ բաժնի պետի ՊԺԿ՝ Է. Համբարձումյան,
Բացակայում է՝
ՀՀ ԶՈՒ ԲՀԱ վարչության ԳԻ և ՏԱ բաժնի սպա, կապիտան՝ Ռ. Նիկողոսյանը:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 1-ին բաժնի գլխավոր մասնագետ Գ. Պողոսյան:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/4» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ. Պողոսյան)

1. ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/4 ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից կայացված որոշման քննարկման մասին.
2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
3. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/4» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
4. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/4 ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից կայացված որոշման քննարկման մասին.

(Գ. Պողոսյան)

1.1 Սույն ընթացակարգի մասով 2022թ. ապրիլի 7-ին (շտկում 13.04.2022թ.) «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է բողոք: Վերջինս խնդրել է պարտավորեցնել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/4» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընթացակարգը 9-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած և փոփոխել ապրանքի տեխնիկական բնութագիրը: ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը թիվ ԳԲՔԱ-Լ0-2022/63 առ 06.05.2022թ. (11.05.2022թ. տեղեկագրում հրապարակված) որոշմամբ բավարարել է «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը և պարտավորեցրել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/4» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին փոփոխել ընթացակարգի 9-րդ չափաբաժնով ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը կամ փոփոխություն կատարելու անհնարինության դեպքում գնման ընթացակարգը նույն չափաբաժնի մասով հայտարարել չկայացած:

1.2 Քանի որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից, հաշվի առնելով, որ ընթացակարգի վերաբերյալ բողոքը տեղեկագրում հրապարակվել է 14.04.2022թ.-ին, իսկ ընթացակարգի հայտերը բացվել են հրավերով նախատեսված՝ 2022թ. ապրիլի 08-ին, ժամը 10:00-ին, այսինքն ընթացակարգը կասեցվել է հայտերի գնահատման փուլում, հետևաբար անհնար է ընթացակարգի շրջանակներում տեխնիկական բնութագրում փոփոխություն կատարել, ուստի «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/4» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց՝ ընթացակարգը 9-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած:

Հաշվի առնելով վերոգրյալը ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց չգնահատել 9-րդ չափաբաժնի մասով «ԳԱՅԱ03» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով և ժամկետներում ներկայացրած անհամապատասխանությունների շտկումները: Միաժամանակ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց չքննարկել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/4» ծածկագրով ընթացակարգի 9-րդ չափաբաժնի մասով «ԳԱՅԱ03» ՍՊԸ-ի և «ՄԵԳԱՄԱՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Գ. Պողոսյան)

2.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/4» ծածկագրով ընթացակարգին գնային առաջարկ են ներկայացրել 5 մասնակից.

ՀՀ	Ապրանքի անվանումը	Չ/Մ	Քանակը	Նախահաշվ. գումարը	Մրցույթին մասնակցող կազմակերպությունների			
					անվանումները	գնային առաջարկները		
						առանց ԱԱՀ	ԱԱՀ	ընդհանուր գինը
1	խորհրդանշական նվերներ	հատ	20	640,000	«Էյչ Բի Էն» ՍՊԸ	580000	0	580000
					«ՄԵԳԱՄԱՐ» ՍՊԸ	640000	0	640000
2	խորհրդանշական նվերներ	հատ	20	500,000	«ԱՏԱ» ՍՊԸ	600000	0	600000
3	խորհրդանշական նվերներ	հատ	20	1,000,000	Առաջարկի բացակայություն			
4	նվերներ և պարգևներ	հատ	60	678,000	«ԱՏԱ» ՍՊԸ	1200000	0	1200000
5	շախմատ	լրակազմ	340	2,550,000	«ՄԵԳԱՄԱՐ» ՍՊԸ	2338520	0	2338520
6	դրոշակաձող	հատ	20	400,000	«Արմեն Մանուկյան Սուրենի» Ա/Ձ	380000	0	380000
7	ուժեղացուցիչներ	հատ	20	4,600,000	Առաջարկի բացակայություն			
8	թվային լուսանկարչական ապարատներ	հատ	40	5,600,000	Առաջարկի բացակայություն			
9	տեսապրոյեկտորներ	հատ	20	10,400,000	*«ԳԱՅԱ03» ՍՊԸ*	*10000000*	*0*	*10000000*
					«ՄԵԳԱՄԱՐ» ՍՊԸ	*11000000*	*0*	*11000000*

2.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են:

2.3 Քանի որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/4» ծածկագրով ընթացակարգի 2-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժիններին հայտ է ներկայացրել մեկ մասնակից, ինչպես նաև 2-րդ և 4-րդ չափաբաժնի մասով առաջարկված գները գերազանցում են պլանավորված նախահաշվային գները՝ գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները որոշեց նիստը կասեցնել և գների նվազեցման նպատակով 17.05.2022թ. ժամը 11:40-ին ՀՀ ՊՆ ԳԿ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպել միաժամանակյա բանակցություններ բոլոր մասնակիցների հետ:

17.05.2022թ. շարունակելով նիստը, գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ նշված օրը ժամը 11:40-ին նախատեսված բանակցություններին մասնակիցները՝ «ՄԵԳԱՄԱՐ» ՍՊԸ-ն, «ԱՏԱ» ՍՊԸ-ն և «Արմեն Մանուկյան Սուրենի» Ա/Ձ-ն չներկայացան բանակցություններին, ուստի վերջիններիս առաջարկած գները մնացին առանց փոփոխության:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/4» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Գ. Պողոսյան)

3.1 18.05.2022թ.՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/4» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում՝ 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչվեց «Էյչ Բի Էն» ՍՊԸ-ն, 5-րդ, չափաբաժնի մասով՝ «ՄԵԳԱՄԱՐ» ՍՊԸ-ն և 6-րդ չափաբաժնի մասով՝ «Արմեն Մանուկյան Սուրենի» Ա/Ձ-ն:

3.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակիցներին պայմանագրեր կնքելու առաջարկ ներկայացնել: Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/4» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

3.3 Քանի որ ներկայացված գները 2-րդ և 4-րդ չափաբաժինների մասով գերազանցում են գնումն իրականացնելու համար նախատեսված նախահաշվային գները՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին) գնահատող հանձնաժողովը որոշեց ընթացակարգը վերը նշված չափաբաժինների մասով հայտարարել չկայացած: Ընթացակարգը՝ 3-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով հայտարարվեց չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետը (ոչ մի հայտ չի ներկայացվել):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ

(Գ. Պողոսյան)

4.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/4» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)՝	Հ. Մելիքյան
Գնահատող՝	Խ. Խաչատրյան
Գնահատող՝	Է. Համբարձումյան
Գնումները համակարգող՝	Գ. Պողոսյան